# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Եղեգնավան համայնքի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

2. Համայնքի ղեկավարի 2019 թ-ի վարձատրության չափը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

3. Համայնքապետարանի 2019 թ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

4. <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-ի 2019 թ-ի աշխատակազմի աշխատանիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

5. Համայնքի 2019 թ-ի բյուջեն հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

6. Համայնքային սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

7. Տրանսպորտային միջոցը համակարգչային շտեմարանից հանելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

| | Կողմ -6 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ | | | |
| ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ | | | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ | | | |
| ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ | | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ | | | |
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 47-Ն

### ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արարատի մարզպետարանի 26.11.2018 թ. թիվ 1/1/14/1/7545-18 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Սահմանել Եղեգնավան համայնքի 2019 թ-ի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի /կցվում է 3 էջ/:

2. Համայնքի ավագանու 2018 թ-ի նոյեմբերի 19-ի <<Եղեգնավան համայնքի տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին>> թիվ 44-Ն որոշումը ճանաչել անվավեր:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՉՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Եղեգնավան համայնքի
Ավագանու 03.12.2018 թ-ի թիվ 47-Ն որոշման

# ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի
# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 4500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 1500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

5) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար 180 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

6) համայնքի անվանում որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.

2. Եղեգնավան համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

- Մինչև 1 հա.-ի համար՝ 1000 դրամ,
- 1 հա.-ից 10 հա.-ի համար՝ 5000 դրամ,
- 10 հա. և ավելի դեպքում՝ 10000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 120 դրամ,

բ) առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ օբյեկտների համար՝ 1 քմ համար՝ 20 դրամ,

գ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային շինությունների համար՝ 1քմ. Համար՝ 2 դրամ:

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ,

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ,

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ 1 երեխայի համար՝ 5000 դրամ.

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵՂԻԳԱՐՈՎԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 48

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2019 թ-ի համար սահմանել 280000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 49

### ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 թ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.**

Հաստատել 2019 թ-ի համայնքապետարանի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի /կցվում է 1 էջ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնքի ավագանու
03.12.2019 թ. թիվ 49 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 թ-ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ա/ Աշխատողների քանակը՝ 6 /վեց/
բ/ Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1/ | 1 | 220000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-1/ | 1 | 198000 |
| Համայնքպետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-1/ | 1 | 178000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-1/ | 1 | 140000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր 3.3-2/ | 1 | 115000 |
| Տեխնիկական սպասարկման պաշտոն | | |
| Գանձապահ-հարկահավաք | 1 | 178000 |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ /ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ/ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.
ա/ Աշխատողների քանակը՝ 4 /չորս/
բ/ Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Քաղաքացիական աշխատողներ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 120.000 |
| Գեղմասվար | 1 | 110.000 |
| Պահակ-այգեպան | 1 | 73.500 |
| Հավաքարար | 1 | 80.000 |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.
ա/ Աշխատողների քանակը՝ 2 /երկու/
բ/ Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Սպասարկման աշխատողներ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
| Փականագործ | 1 | 105.000 |
| Աղբահան վարորդ | 1 | 100.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵՂԻԳԱՐՈՎԱ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 50

## <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-ի 2019 թ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-ի 2019 թ. աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի /կցվում է 1 էջ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՋՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնքի ավագանու
03.12.2018 թ-ի թիվ 50 որոշման

# <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-Ի 2019 թ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատողների քանակը՝ 11 /տասնմեկ/
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 135.000 |
| Մանկապարտեզի հաշվապահ | 1 | 85.000 |
| Մանկապարտեզի դաստիարակ | 1 | 115.000 |
| Մանկապարտեզի դաստիարակ | 1 | 115.000 |
| Դաստիարակի օգնական | 1 | 85.000 |
| Դաստիարակի օգնական | 1 | 79.000 |
| Մանկապարտեզի խոհարար | 1 | 79.000 |
| Երաժշտության դաստիարակ | 0.5 | 115.000 |
| Տնտեսվար - լվացարար | 1 | 79.000 |
| Հավաքարար | 0.5 | 85.000 |
| Օժանդակ բանվոր | 0.5 | 85.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 51-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել համայնքի 2019 թ-ի բյուջեն՝ համաձայն հավելվածի /կցվում է 3 էջ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնքի ավագանու
03.12.2018 թ: թիվ 51-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի ԲՅՈՒՋԵ

## ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ

### ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

2019 թ-ի բյուջեի եկամտային մասը կազմում է ընդամենը` 54243.5 հազ. դրամ, որից

1. Հարկային եկամուտներ` 11801.4 հազ. դրամ, նույն թվում
ա/ հողի հարկ 9193.4 հազ. դրամ, նույն թվում ֆիզիկական անձանցից 9130.0 հազ. դրամ, 63.4 հազ.դրամ իրավաբանական անձանցից
բ/ գույքահարկ փոխադրամիջոցների համար 2300,0 հազ. դրամ, նույն թվում ֆիզիկական անձանցից 2292.0 հազ. դրամ, 8.0 հազ.դրամ իրավաբանական անձանցից.
գ/ գույքահարկ շենքերի և շինությունների համար 100.0 հազ.դրամ, նույն թվում ֆիզիկական անձանցից 100.0 հազ.դրամ.
դ/ տեղական տուրք 208.0 հազ. դրամ, որից ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար 208.0 հազ. դրամ,

2. Ոչ հարկային եկամուտներ`
վարձակալական հողերի վարձավճարներ` 4000.0 հազ. դրամ, նույն թվում ֆիզիկական անձանցից` 4000.0 հազ. դրամ,

3. Տեղական վճարներ` 6000.0 հազ. դրամ, որից
աղբահանության վճար` 1500.0 հազ. դրամ, նույն թվում ֆիզիկական անձանցից 1400.0 հազ. դրամ, իրավաբանական անձանցից` 100.0 հազ. դրամ
ջրի վարձ` 4500.0 հազ. դրամ, նույն թվում ֆիզիկական անձանցից 4500.0 հազ. դրամ,

4. Մանկապարտեզի ծառայություններից գանձվող ծնողական վճարները սահմանել 1000,0 հազ.դրամ,

5. Դոտացիա ընթացիկ տարվա համար` 31442.1 հազ.դրամ:

### ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

<u>Կառավարման մարմնի պահպանում /բաժին 1, խումբ 1, դաս 1/</u>

1. Աշխատավարձ` 4111 հոդված - 13600.0 հազ. դրամ:
2. Պարգևատրում` 4112 հոդված - 1700.0 հազ.դրամ:
4. Էներգետիկ ծառայություններ` 4212 հոդված - 420.0 հազ. դրամ, որից
   Գազի ծախս - 300.0 հազ. դրամ
   Էլ.էներգիայի ծախս` 120.0 հազ.դրամ,
5. Կապի ծառայություն` 4214 հոդված - 132.0 հազ. դրամ, որից
   ինտերնետ ծախս - 132.0 հազ. դրամ,
6. Ապահովագրական ծախսեր` 4215 հոդված - 30.0 հազ. դրամ,
7. Համակարգչային ծառայություններ` 4232 հոդված - 175.2 հազ. դրամ:
8. Տեղեկատվական ծառայություններ` 4234 հոդված -49.0 հազ. դրամ,
9. Ընդհանուր բնույթի այլ ծառայություն` 4239- 606.8 հազ.դրամ,
10. Այլ մասնագիտական ծառայություններ` 4241 հոդված - 45.550 հազ. դրամ,
11. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում` 4251 հոդված - 200.0 հազ. դրամ,
12. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում` 4252 հոդված - 300.0 հազ. դրամ,
13. Գրասենյակային նյութեր և հագուստ.` 4261 հոդված -100.0 հազ. դրամ,
14. Տրանսպորտային նյութեր` 4264 հոդված - 800.0 հազ. դրամ, որից

Բենզինի ծախս - 600.0 հազ. Դրամ
Գազի ծախս- 200.0 հազ.դրամ,
15. Պարտադիր վճարներ՝ 4823 հոդված- 42.350 հազ.դրամ, որից
Ավտոմեքենների տեխ. զննում - 9.350 հազ. դրամ,
Բնապահպանական վճարներ՝ 33.0 հազ.դրամ:
Ընդամենը 18200.9 հազ. դրամ:

Հասարակական կազմակերպություններին աջակցություն /բաժին -10, խումբ 7, դաս 1/
Նվիրատվություն այլ շահ չհետապնդող կազմակերպություններին՝ 4819 հոդված - 100.0 հազ. դրամ,
Ընդամենը՝ 100.0 հազ. դրամ:

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /բաժին -1, խումբ-3, դաս -3/
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 4239 հոդված - 700,0 հազ. դրամ
Ընդամենը 700,0 հազ. դրամ:

Գույքի նկատմամբ իրավունքի գրանցում /բաժին -1, խումբ 6, դաս 1/
Պարտադիր վճարներ՝ 4823 հոդված- 200.0 հազ.դրամ
Ընդամենը՝ 200.0 հազ. դրամ:

Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում /բաժին 6, խումբ 4, դաս 1/
Էներգետիկ ծառայություններ՝ 4212 հոդված - 1380.0 հազ. դրամ,
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 4239 հոդված - 200.0 հազ. դրամ,
Լուսատու սարքավորումների ընթացիկ նորոգում ՝ 4252 հոդված- 300.0 հազ.դրամ
Ընդամենը՝ 1880.0 հազ. դրամ:

Ջրային կառույցների շահագործում և պահպանում/ /բաժին 6, խումբ 6, դաս 1/
Աշխատավարձ՝ 4111 հոդված - 1260.0 հազ. դրամ
Ջրամատակարարում՝ 4213 հոդված - 2000.0 հազ. դրամ
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4251 հոդված - 100.0 հազ. դրամ
Տրանսպորտային նյութեր՝ 4264 հոդված- 100. 0 հազ.դրամ
Ընդամենը՝ 3460. հազ. դրամ:

Նախադպրոցական կրթություն /բաժին 9, խումբ 1, դաս 1/
Հատկացում ՀՈԱԿ-ին՝ 4639 հոդված - 9304.6 հազ. դրամ:
Ընդամենը՝ 9304.6 հազ. դրամ:

Բարձրագույն կրթություն /բաժին 9, խումբ 4, դաս 1/
Կրթական նպաստներ բյուջեից՝ 4729 հոդված - 200.0 հազ. դրամ:
Ընդամենը՝ 200.0 հազ. դրամ:

Սոցիալական պաշտպանություն անապահով ընտանիքներին /բաժին 10, խումբ 7, դաս 1/
1. Հուղարկավորության ծախսեր՝ 4726 հոդված- 400.0 հազ. դրամ:
2. Այլ նպաստներ բյուջեից՝ 4729 հոդված- 1500.0 հազ. դրամ:
Ընդամենը՝ 1900.0 հազ. դրամ:

Հանգիստ, մշակույթ, կրոն /բաժին 8, խումբ 5, դաս 1/
Աշխատավարձ՝ 4111 հոդված - 4500.0 հազ. դրամ
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4251 հոդված - 100.0 հազ. դրամ
Հատուկ նպատակային նյութեր՝ 4269 հոդված - 350.0 հազ. դրամ,
Ընդամենը՝ 4950.0 հազ. դրամ:

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում / բաժին-8 , խումբ-2 , դաս-3/
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն՝4239 հոդված- 400.0 հազ.դրամ
Հատուկ նպատակային նյութեր՝ 4269 հոդված - 700.0 հազ. դրամ
Ընդամենը ՝ 1100.0 հազ. դրամ:

Շրջակա միջավայրի պաշտպանություն /Աղբահանություն/ /բաժին 5, խումբ 1, դաս 1/
Աշխատավարձ՝ 4111 - 1200.0 հազ. դրամ
Տրանսպորտային նյութեր՝ 4264 հոդված - 200.0 հազ. դրամ
Ընդամենը 1400.0 հազ. դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ /բաժին- 11, խումբ- 1, դաս -1/
Պահուստային ֆոնդ՝ 4891 հոդված 10848.0 հազ. դրամ:
Ընդամենը 10848.0 հազ. դրամ:

## ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ

### ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե՝ 5536.0 հազ. դրամ;
2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը, որը ուղղվում է ծախսերի ծածկմանը 164.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 5700.0 հազ. դրամ:

### ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

Կառավարման ապարատ /բաժին – 1, խումբ – 1, դաս – 1/
Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված –200.0 հազ. դրամ,
Ընդամենը՝ 200.0 հազ. դրամ:

Ճանապարհային տրանսպորտ- /բաժին – 1, խումբ – 1, դաս – 1/
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 5113 հոդված- 1800.0 հազ.դրամ
Նախագծա-հետազոտական ծախսեր՝ 5134 հոդված- 50.0 հազ.դրամ,
Ընդամենը՝ 1850.0 հազ. դրամ:

Հանգիստ, մշակույթ, կրոն /բաժին –8, խումբ –5, դաս –1/
Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված -1000.0 հազ.դրամ,
Ընդամենը՝ 1000.0 հազ. դրամ:

Նախադպրոցական կրթություն /բաժին –9, խումբ –1, դաս –1/
Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված –200,0 հազ. դրամ,
Ընդամենը՝ 200,0 հազ. դրամ:

Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում /բաժին-9, խումբ-6, դաս-1/
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում- 500.0 հազ.դրամ
Նախագծա-հետազոտական ծախսեր՝ 5134 հոդված- 50.0 հազ.դրամ
Ընդամենը՝ 550,0 հազ. դրամ:

Կանաչ տարածքների հիմնում և պահպանում /բաժին –5, խումբ –6, դաս –1/
Աճեցվող ակտիվներ՝ 5131 հոդված – 800.0 հազ.դրամ
Նախագծա-հետազոտական ծախսեր՝ 5134 հոդված- 100.0 հազ.դրամ
Ընդամենը՝ 900.0 հազ. դրամ:

Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում /բաժին 6, խումբ 4, դաս 1/
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 5113 հոդվածը - 800.0 հազ.դրամ
Նախագծա-հետազոտական ծախսեր՝ 5134 հոդված- 200.0 հազ.դրամ
Ընդամենը՝ 1000.0 հազ. դրամ:

Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ /բաժին – 11, խումբ – 1, դաս – 2/
Պահուստային ֆոնդ՝ 4891 հոդված – 0.0 հազ. դրամ:
Ընդամենը՝ 0.0 հազ. դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. ԵՂԻԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 52-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.**

Հաստատել 2018 թ-ի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների /կցվում է 3 էջ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնքի ավագանու
03.12.2018 թ. Թիվ 52-Ա որոշման

# ՏԵՂԵԿԱԳԻՐ
## Գույքագրման արդյունքների համեմատություն
## Եղեգնավանի համայնքապետարան

| h/h | Ապրանքների նյութերի անվանումը | Շահագործման տարեթիվը | Չափի միավորը | գինը | Փաստացի գտնված է /առկա/ | | Մնացորդը ըստ հաշվապական տվյալների Վերագնահատումից հետո | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակ | գումար | քանակ | գումար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 010 | | | | | | | |
| 1 | Համայնքապետարանի շենք | 1957 | հատ | 982977 | 1 | 982977 | 1 | 14 385 000 |
| 2 | Բուժամբուլատորիայի շենք | 1957 | հատ | 68430 | 1 | 68430 | 1 | 68430 |
| 3 | Ջրի պոմպի շենք | 1985 | հատ | 238824 | 1 | 238824 | 1 | 238824 |
| | 011 | | | | | | | |
| 4 | Ընդերքային /արտեզյան/ հոր | - | հատ | 364676 | 3 | 1094026 | 3 | 788000 |
| 5 | Ջրաչափական հոր | 2013 | հատ | 36000 | 6 | 216000 | 6 | 156000 |
| | 012 | | | | | | | |
| 6 | Գյուղի ջրի խողովակաշար | 2013 | կմ | 4800000 | 4.084 | 4800000 | 4.084 | 3456000 |
| 7 | Գյուղի ջրի խողովակաշար | 2014 | կմ | 1535900 | 1.571 | 1535900 | 1.571 | 1244000 |
| 8 | Գյուղի ջրի խողովակաշար | 2015 | մ | 74700 | 230 | 74700 | 230 | 61000 |
| 9 | Ոռոգման կիսախողովակ | 2000 | կմ | 22532708 | 3.5 | 22532708 | 3.5 | 8112000 |
| 10 | Գազի խողովակաշար | 2004 | կմ | 3956300 | 4.392 | 3956300 | 4.392 | 2136000 |
| 11 | Գազի խողովակաշար մ/ճ | 2005 | կմ | 10000000 | 0.747 | 10000000 | 0.747 | 6300000 |
| 12 | Գազի խողովակաշար | 2007 | կմ | 9000000 | 1.572 | 9000000 | 1.572 | 5670000 |
| 13 | Գազի խողովակաշար | 2006 | կմ | 15284596 | 4.088 | 15284596 | 4.088 | 8559000 |
| 14 | Գազի խողովակաշար | 2010 | կմ | 23681308 | 2.17 | 23681308 | 2.17 | 15156000 |
| 15 | Գազի խողովակաշարի շինմոնտաժում | 2017 | փողոց | 950000 | 1 | 950000 | 1 | 857000 |
| 16 | Ճանապար լուսավորություն | 1980 | փողոց | 215162 | 2 | 215162 | 2 | 90000 |
| 17 | Ճանապար լուսավորություն | 2008 | փողոց | 341000 | 1 | 341000 | 1 | 191000 |
| 18 | Ճանապար լուսավորություն | 2010 | փողոց | 1120000 | 5 | 1120000 | 5 | 806000 |
| | 013 | | | | | | | |
| 19 | Սառնարան ցուցափեղկ | 2014 | հատ | 209000 | 1 | 209000 | 1 | 169000 |
| 20 | Գանձարկղ | | հատ | 8862 | 1 | 8862 | 1 | 20000 |
| 21 | Հեռուստացույց GVS | | հատ | 194425 | 1 | 194425 | 1 | 54000 |
| 22 | Պրինտեր HP 1000W | | հատ | 131850 | 1 | 131850 | 1 | 37000 |
| 23 | Պրինտեր /գունավոր/Epson 662 | | հատ | 158220 | 1 | 158220 | 1 | 44000 |
| 24 | Պրինտեր Xerox Phaser 3117 | 2010 | հատ | 49920 | 1 | 49920 | 1 | 14000 |
| 25 | Պրինտեր HP 1020W | | հատ | 133000 | 1 | 133000 | 1 | 37000 |
| 26 | Տպիչ | 2017 | հատ | 55000 | 2 | 110000 | 2 | 99000 |
| 27 | ՊԱՏՃԵՆ phaser 3100 MFP | 2011 | հատ | 97000 | 1 | 97000 | 1 | 54000 |
| 28 | Սկաներ <<Զենիուս>> | | հատ | 27200 | 1 | 27200 | 1 | 10000 |
| 29 | Համակարգիչ PIV 2000 | | հատ | 509747 | 1 | 509747 | 1 | 178000 |
| 30 | Համակարգիչ PIV | 2008 | հատ | 200000 | 2 | 400000 | 2 | 168000 |
| 31 | Համակարգիչ DUAL E 5700 | 2011 | հատ | 152500 | 1 | 152500 | 1 | 75000 |
| 32 | Համակարգիչ RAM 4GB HDP 500GB PWD RW Core i3 monitor 19 | 2014 | հատ | 215000 | 1 | 215000 | 1 | 120000 |
| 33 | Պրոցեսոր RAM 4GB HDP 500GB PWD RW Core i3 | 2014 | հատ | 155000 | 1 | 155000 | 1 | 87000 |
| 34 | Տեսահսկման համակարգ | 2016 | հատ | 320000 | 1 | 320000 | 1 | 289000 |
| 35 | INTEL G3240 պրոցեսորով համակարգիչ | 2016 | հատ | 135000 | 1 | 135000 | 1 | 115000 |
| 36 | INTEL DUAL CORE G 4400 պրոցեսորով համակարգիչ | 2017 | հատ | 145000 | 1 | 145000 | 1 | 124000 |
| 37 | Նոթբուք HP 4530 S Corei 32110 | 2011 | հատ | 239167 | 1 | 239167 | 1 | 117000 |
| 38 | Բազմաֆունկցիոնալ պատճ. մեք. | 2018 | հատ | 165000 | 1 | 165000 | 1 | 165000 |
| 39 | Ֆլեշ հիշողություն | 2014 | հատ | 5600 | 1 | 5600 | 1 | 4000 |
| 40 | Ֆլեշ հիշողություն 16գբ | 2016 | հատ | 10000 | 1 | 10000 | 1 | 8000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | Ֆոտոխցիկ SONY W690/0166 | 2012 | հատ | 117500 | 1 | 117500 | 1 | 85000 |
| 42 | Ցանցային անլար ռոութեր TL-LINK TL WR740N | 2013 | հատ | 18000 | 1 | 18000 | 1 | 13000 |
| 43 | Գազի պլիտա | | հատ | 7000 | 1 | 7000 | 1 | 4000 |
| 44 | Թերմոս <<Նոդել>> /խմելու ջրի սարքավորում/ | 2010 | հատ | 54000 | 1 | 54000 | 1 | 30000 |
| 45 | Մագն դինամիկ SONY | | կոմպ | 25833 | 1 | 25833 | 1 | 11000 |
| 46 | Ա/մ մագնիտաֆոն GVS | | հատ | 79167 | 1 | 79167 | 1 | 33000 |
| 47 | Ա/մ գազի սարքավորում | | հատ | 350000 | 1 | 350000 | 1 | 147000 |
| 48 | Ջեռուցման համակարգ BAXI | | հատ | 1000000 | 1 | 1000000 | 1 | 420000 |
| 49 | Հաշվիչ եռաֆազ | | հատ | 150000 | 1 | 150000 | 1 | 63000 |
| 50 | Ճյակ | -- | հատ | --- | 1 | ---- | 1 | ---- |
| 51 | Ջրի պոմպ | 2015 | հատ | 64000 | 1 | 64000 | 1 | 58000 |
| 52 | Ջրի պոմպ | 2017 | հատ | 104000 | 1 | 104000 | 1 | 104000 |
| | 014 | | | | | | | |
| 53 | Էքսկավատոր | 1987 | հատ | 540191 | 1 | 540191 | 1 | 540191 |
| 54 | Կոմբայն ՍԿ-5 | 1988 | հատ | 250291 | 1 | 250291 | 1 | 250291 |
| 55 | Ավտոմեքենա ԳԱԶ 31105-120 | 2005 | հատ | 3475416 | 1 | 3475416 | 1 | 559 000 |
| 56 | Խոտհնձիչ կոմբայն E281 c | 1988 | հատ | 5580000 | 1 | 5580000 | 1 | 1 700 000 |
| 57 | Խոտհնձիչ մեքենա | 2016 | հատ | 140000 | 1 | 140000 | 1 | 126000 |
| 58 | Խոտհնձիչ բենզինով | 2016 | հատ | 81450 | 1 | 81450 | 1 | 70000 |
| 59 | Ավտոմեքենա <Տոյոտա-Կորոլլա> | 2014 | հատ | 11620000 | 1 | 11620000 | 1 | 5 044 000 |
| | 015 | | | | | | | |
| 60 | Շերտավարագույր | 2014 | $մ^2$ | 5000 | 22 | 110000 | 22 | 62000 |
| 61 | Անվանական ցուցանակներ | 2014 | հատ | 3000 | 6 | 18000 | 6 | 12000 |
| | 016 | | | | | | | |
| 62 | Տպագրական մեքենա <<Յատրան>> | | հատ | 61147 | 1 | 61147 | 1 | 3000 |
| 63 | Բազմոց | | հատ | 13645 | 1 | 13645 | 1 | 2000 |
| 64 | Պահարան | | հատ | 37220 | 1 | 37220 | 1 | 6000 |
| 65 | Գրասենյակային պահարան | 2014 | հատ | 67500 | 6 | 405000 | 6 | 227000 |
| 66 | Էլ.տաքացուցիչ | | հատ | 25000 | 1 | 25000 | 1 | 4000 |
| 67 | Հեռուստացույցի տակդիր | | հատ | 50000 | 1 | 50000 | 1 | 8000 |
| 68 | Հեռուստացույց | 2016 | հատ | 369000 | 1 | 369000 | 1 | 333000 |
| 69 | Հեռուստացույցի տակդիր | 2016 | հատ | 14000 | 1 | 14000 | 1 | 13000 |
| 70 | Օդափոխիչ | 2016 | հատ | 24000 | 1 | 24000 | 1 | 21000 |
| 71 | Գրասենյակային սեղան | | հատ | 30000 | 4 | 120000 | 4 | 67000 |
| 72 | Համակարգչային սեղան | | հատ | 30000 | 3 | 90000 | 3 | 50000 |
| 73 | Աթոռ երկաթյա փափուկ /գրասենյակային/ | | հատ | 10000 | 12 | 120000 | 12 | 67000 |
| 74 | Բազկաթոռ փոքր պտտվող | | հատ | 14000 | 2 | 28000 | 2 | 16000 |
| 75 | Բազկաթոռ մեծ պտտվող | | հատ | 52000 | 1 | 52000 | 1 | 29000 |
| 75 | Ղեկավարի սեղան /համալիր/ | | հատ | 120000 | 1 | 120000 | 1 | 67000 |
| 76 | Խորհրդակցական սեղան /համալիր/ | | հատ | 145000 | 1 | 145000 | 1 | 81000 |
| 77 | Պահարան / համալիր/ | | հատ | 180000 | 1 | 180000 | 1 | 101000 |
| | 017 | | | | | | | |
| 78 | Սեղան գրասենյակային /տումբա/ | | հատ | 291 | 3 | 873 | 3 | 0 |
| 79 | Տրյումո | | հատ | 154 | 1 | 154 | 1 | 0 |
| 80 | Պահարան երկաթյա | | հատ | 719 | 3. | 2157 | 3 | 75000 |
| 81 | Սեղան մանկական | | հատ | 154 | 2 | 308 | 2 | 0 |
| 82 | Հաշվիչ մեքենա | | հատ | 5000 | 1 | 5000 | 1 | 1000 |
| 83 | Հաշվիչ մեքենա | 2014 | հատ | 1300 | 1 | 1300 | 1 | 1000 |
| 84 | Հաշվիչ մեքենա | 2015 | հատ | 2300 | 1 | 2300 | 1 | 1000 |
| 85 | Հաշվիչ մեքենա | 2017 | հատ | 2500 | 1 | 2500 | 1 | 2000 |
| 86 | Սն դույլ /աղբաման/ | 2017 | հատ | 1300 | 3 | 3900 | 3 | 4000 |
| 87 | Ծորակ | 2017 | հատ | 8800 | 1 | 8800 | 1 | 8000 |
| 88 | Պրոժեկտոր LED 30W | 2018 | հատ | 6250 | 4 | 25000 | 4 | 25000 |
| | Ընդամենը | | | 123.936.633 | | 126.456.683 | | 80.855.736 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԵԴԻԳԱՐՈՎԱ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնքի ավագանու
03.12.2018 թ. Թիվ 52-Ա որոշման

# ՏԵՂԵԿԱԳԻՐ
## Գույքագրման արդյունքների համեմատություն
## Եղեգնավան համայնքի Մշակույթի տուն

| հ/հ | Ապրանքների նյութերի անվանումը | Շահագործման տարեթիվը | Չափի միավորը | գինը | Փաստացի գտնված է /առկա/ | | Մնացորդը ըստ հաշվապահական տվյալների | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակ | գումար | քանակ | գումար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 010 | | | | | | | |
| 1 | Մշակույթի տան շենք | 1987 | հատ | 32389728 | 1 | 32389728 | 1 | 32.389.728 |
| | 011 | | | | | | | |
| 2 | Երաժշտ կենտրոն համակարգ | | համակ | 1300000 | 1 | 1300000 | 1 | 416000 |
| | 012 | | | | | | | |
| 3 | Բեմի վարագույր | | հատ | 250000 | 1 | 250000 | 1 | 80000 |
| 4 | Պարի համազգեստ | | կոմպ | 41666 | 12 | 500000 | 12 | 160000 |
| | 013 | | | | | | | |
| 5 | Պահարան | | հատ | 4606 | 3 | 13818 | 3 | 4000 |
| 6 | Պահարան | | հատ | 10000 | 1 | 10000 | 1 | 3000 |
| 7 | Աթոռ թատերական | | հատ | 7690 | 260 | 2000000 | 260 | 640000 |
| 8 | Աթոռ կիսափափուկ | | հատ | 15000 | 15 | 225000 | 15 | 72000 |
| 9 | Ստեղծ մետաղյա | | հատ | 154 | 3 | 462 | 3 | 6000 |
| 10 | Սեղան գրասենյակային | | հատ | 262 | 5 | 1310 | 5 | 2000 |
| 11 | գրասեղան | | հատ | 154 | 6 | 924 | 6 | 3000 |
| | 014 | | | | | | | |
| 12 | կատարողի արկղ | | հատ | 231 | 2 | 462 | 2 | 0 |
| 13 | պրոժեկտոր | | հատ | 1563 | 8 | 12500 | 8 | 4000 |
| 14 | Պրոժեկտոր LED 20W | 2018 | հատ | 7000 | 2 | 14000 | 2 | 14000 |
| 15 | Պրոժեկտոր LED 30W | 2018 | հատ | 6250 | 2 | 12500 | 2 | 12500 |
| | 015 | | | | | | | |
| 16 | գրքեր | | հատ | 741200 | 1466 | 741200 | 1466 | 237000 |
| | 016 | | | | | | | |
| 17 | Բահ թիակային | 2017 | հատ | 850 | 2 | 1700 | 2 | 1000 |
| 18 | Բահ սվինային | 2017 | հատ | 3800 | 2 | 7600 | 2 | 7000 |
| 19 | Փոցխ | 2017 | հատ | 1200 | 1 | 1200 | 1 | 1000 |
| 20 | Բեռնասայլակ | 2017 | հատ | 12000 | 1 | 12000 | 1 | 11000 |
| 21 | Ձեռքի այգեգործական մկրատ | 2017 | հատ | 5500 | 1 | 5500 | 1 | 5000 |
| 22 | Ջրի պոմպ | 2018 | հատ | 55000 | 1 | 55000 | 1 | 50000 |
| 23 | Ուղղահայաց ճոճանակ | 2018 | հատ | 200000 | 1 | 200000 | 1 | 200000 |
| 24 | Կարուսել | 2018 | հատ | 150000 | 1 | 150000 | 1 | 150000 |
| 25 | Նստարան | 2018 | հատ | 120000 | 1 | 120000 | 1 | 120000 |
| 26 | Սահարան | 2018 | հատ | 130000 | 1 | 130000 | 1 | 130000 |
| | ընդամենը | | | 34.729.654 | | 38.128.404 | | 34.718.228 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԵԴԻԳԱՐՈՎԱ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 53

### ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 25.06.2015 թ: թիվ 708-Ա որոշմամբ, հիմք ընդունելով <<Ճանապարհային ոստիկանության>> ծառայության և ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրական ընկերությունների գրությունները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Համակարգչային շտեմարանից հանել Իրինա Մելքումյանին պատկանող 26 LO 802 պ/հ Մ412 մակնիշի ավտոմեքենան:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**